

Մրցանակային 1-ին տեղ

Հելեն Ասրյան

Ստեփանակերտի հ.8 ավագ դպրոց

12-րդ դասարան

Ինչու են մարդու իրավունքները կարևոր

Շարադրություն

Ես իրավունք ունեմ... Իմ շրջապատի մարդկանից հաճախ եմ լսել ու լսում այս արտահայտությունը: Նրանք այս բառերն արտասանում են ամենատարբեր առիթներով, յուրաքանչյուրն իր կատարած արարքը արդարացնելու, դիմացինին ինչ-որ բան ապացուցելու համար, սակայն իրականում շատ քչերն են իրավունք բառի բովանդությունն ու էությունը հասկանում: Մեր իրականությունում «Իրավունք» ասվածը երբեմն սխալ մեկնաբանություն է ստանում և խեղաթյուրվում բովանդակային առումով:

Իրավաբան չեմ, սակայն «Իրավունք» հասկացությանը ծանոթացել եմ «Հասարակագիտություն» ուսումնական առարկայի շրջանակներում: Կարծում եմ, որ յուրաքանչյուրս պետք է որոշակի գիտելիքներ ունենանք մեր իրավունքների մասին, լինենք իրազեկված և անհրաժեշտության դեպքում կարողանանք պաշտպանել մեր և մեր կողքինների իրավունքները:

Մարդու իրավունքների մասին խոսվել է բոլոր ժամանակներում և դրան տրվել են ամենատարբեր հասկանիշներն ու սահմանումները: Կփորձեմ իմ տեսանկյունից ներկայացնել, թե ինչ է իրավունքը և ինչու՞մն է կայանում դրա կարևորությունը:

Մարդ արարածն իրավունքներ ուներ հազարավոր տարիներ առաջ և ունի մեր օրերում: Այդ իրավունքներն նա ձեռք է բերում աշխարհ գալու օրվանից և կրում է մինչև մահ: Իրավունքը մարդուց անբաժանելի պարզ է:

Մարդը փորձում է իրացնել ու պաշտպանել իր իրավունքները, սակայն դա լիարժեք իրականացնել հնարավոր չէ առանց պետության կողմից այդ իրավունքները

ճանաչելու: Պետությունը Սահմանադրությամբ ու օրենքներով է այդ իրավունքների իրացման ու պաշտպանության երաշխիքներ ստեղծում՝ մեր արժանապատիվ կյանքը, հավասարությունը, ազատությունը ապահովելու համար:

2006թ. դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը եւ ԼՂՀ Անկախության հանրաքվեի օրը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անցկացվեց ԼՂՀ առաջին Սահմանադրության նախագծի ընդունման համաժողովրդական հանրաքվե: ԼՂՀ Սահմանադրության ընդունմանը կողմ քվեարկեց 77 հազ. 279 քաղաքացի:

ԼՂՀ Սահմանադրությամբ ամրագրվեց հայկական երկրորդ հանրապետության կայացման իրավական փաստը:

Արցախի Հանրապետության Սահմանադրությունը ամրագրեց մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները՝ կյանքի, անձնական ազատության և անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան կյանքի, մտքի, խղճի, դավանանքի, կրթության, առողջության պահպանման, ընտրելու և ընտրվելու, միավորումներ կազմելու, խաղաղ երթեր, ցույցեր անցկացնելու և այլ իրավունքներ:

Բացի այդ, ԼՂՀ Սահմանադրության 2-րդ հոդվածն ամրագրեց, որ ԼՂՀ-ն ճանաչում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես անօտարելի ու բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք:

Կարծում եմ, որ մեր պետությունում հարգվում և պաշտպանվում են մարդու իրավունքները, սակայն, բնականաբար, կարող են լինել այնպիսի դեպքեր, երբ այդ իրավունքները ոտնահարվեն պաշտոնատար անձանց կամ քաղաքացիների կողմից:

Ինձ մտահոգում է այն հարցը, թե մեր քաղաքացիները որքանով գիտեն իրենց իրավունքները և դրանց պաշտպանության մեխանիզմները, այլ կերպ ասած իրավագիտակցության ինչ մակարդակ ունենք մենք:

Շատ հաճախ իրավունքի խախտման դեպքեր արձանագրվում են մեր չիրազեկվածության ու անտարբերության հետևանքով: Յուրաքանչյուրիցս է կախված, թե ինչպիսի պետություն ու հասարակություն կկառուցենք, ինչպիսի քաղաքացի

կլինենք մենք: Շատերը չեն բարձրաձայնում իրենց իրավունքների խախտումների մասին, մտածելով, որ դրանք համապատասխան արձագանք չեն ստանա:

Համոզված եմ, որ գոյություն ունեցող խնդիրները իրենց լուծումը կստանան, եթե յուրաքանչյուրս ունենանք ինչ-որ բան դեպի լավը փոխելու ցանկություն և ջանքեր գործադրենք այդ նպատակին հասնելու համար:

Մեր ներքին հզորությունն է, որ մեր գոյությունը կպահպանի ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակում: Մենք պետք է գիտակցենք, որ Արցախում ենք ապրում և միայն մարդու իրավունքների մասին գեղեցիկ մտքերը չեն կարող մեր մեզ պաշտպանել այն արտաքին վտանգից, որ մեզ սպառնացել ու սպառնում է:

Ապրիլյան պատերազմը մեզ համար պիտի ազդակ լինի համախմբվելու, հստակ ազգային գաղափար ձևավորելու, մեր պահանջները աշխարհին նորովի ներկայացնելու և այդ աշխարհին այլևս զոհի աչքերով չնայելու համար:

Արցախը երիտասարդ պետություն է, որը բազում երազանքներ ու նպատակներ ունի, ավյուն և ուժ ունի բոլոր փորձություններին դիմակայելու համար: Նա արդեն գոյություն ունի և շարունակելու է ծաղկել ու զարգանալ, անկախ նրանից աշխարհն ուզում է, թե՛ ոչ:

Հայրենիք ունենալու իմ իրավունքը իմ հայրն է ինձ պարզևեղ, հայրենիքում ապրելու իմ իրավունքը հորս հետ նաև եղբայրս է պաշտպանում: